

# Կիրթ գրուցակից

Ողջուն փոքրիկ: Իսկ դու գրուցել գիտե՞ս: Չէ՛, ոչ թե պարզապես խոսել, այլ կիրթ գրույց վարել: Այս հոդվածը հենց այդ մասին է:



\* Բարեհոգի ու հարգալից եղիր գրուցակցիդ նկատմամբ ու հիշիր, որ կիրթ մարդը երբեք չի օգտագործի այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «քո հետ խոսելն անիմաստ է», «ոնց չես հասկանում», «քո նման անհասկացողի դեռ չեմ հանդիպել», «սա քո խելքի բանը չի» և այլն:

\* Հիշիր, որ գրուցակիցդ ևս ասելիք ունի: Նրան հնարավորություն ունի սուր ներքաշվել գրույցի մեջ:

\* Ուշադիր եղիր գրուցակցիդ նկատմամբ: Փորձիր ավելի շուտ նկատել, որ նա շտապում է, քան ինքը կասի այդ մասին: Եթե զգում ես, որ գրույցի թեման անհետաքրքիր կամ տհաճ է գրուցակցիդ համար, ժամանակին փոխիր այն:

\* Մի քննադատիր այս կամ այն մարդու պահվածքը, հագնվելու ոճը: Բամբասկոտի անուն կհանես:

\* Շատախոս մի եղիր: Երկար գրույցը հոգնեցուցիչ է լսողների համար:

\* Խոսքի մեջ մի օգտագործիր այնպիսի բառեր, որոնց իմաստը քեզ անհասկանալի է և որոնք կարող են անծանոթ լինել նաև գրուցակցիդ:

\* Չրուցելիս ձեռքերդ հանգիստ թող ու մի շարժիր: Եթե դու արտահայտվես կոնկրետ ու հստակ, քեզ անպայման կհասկանան: